

**Մարո Վ. Ղուկասյան**

**ՀԱՅԱՏԱՌԻ ԹՈՒՐԹԵՐԵՆԸ ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆԻ  
ԵՐԿԵՐՈՒՄ\***

**Բանալի բառեր** – Հակոբ Պարոնյան, հայատառ թուրքերեն, թուրքախառն հայերեն, «Մեղու» երգիծաթերթ, «Թատրոն» երգիծաթերթ, դերանուն-ծածկանուններ, «Լեռը մարգարէին քով չերթայ նէ՛ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա», «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը», անստորագիր, երգիծանք, երգիծավեպ:

Մուտք

Գրական ստեղծագործությունը բարդ և անկանխատեսելի մի աշխարհ է՝ անակնկալներով ու հակասություններով, պատմական ժամանակաշրջանով, բովանդակային բազմազան շերտերով, հեղինակի անհատականության դրոշմով և նրա ինքնատիպ հոգեբանության ու մտածելակերպի անսպասելի դրսևորումներով:

Այս ամենն է, որ թույլ է տալիս դարերի հեռվից որոնել և գգրոցներից գտնել բազում արժեքավոր և արդիականությունը չկորցրած երկեր, այս ամենն է, որ գրականության պատմությանը նոր ընթացք է հաղորդում՝ դառնալով ուսումնասիրության և բացահայտումների անհուն աղբյուր: Գրականագիտությանն այդ գործերը թելադրում են իրենց ուսումնասիրության առանձնահատկություններն ու ներքին կանոնները, պահանջում ընկալման և վերլուծության միանգամայն նոր չափանիշներ: Այդպիսին են հանձարեղ երգիծաբան Հա-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 29.05.2022:

կոր Պարոնյանի ստեղծագործությունները՝ միշտ արդիական, անվերջ բացահայտելի և նորովի ընկալվող, իսկ գաղտնիքը թաքնված է Պարոնյանի գրողական ու մարդկային եզակի տեսակի մեջ, տեսակ, որի էության մեջ, ինչպես իրավացիորեն նկատում է ակադեմիկոս Արսեն Տերտերյանը, «մարդը և գրողը հավասար բարձրության վրա են գտնվում»<sup>1</sup>: Գրաքննադատ Հրանտ Ասատուրը գրում է. «Իրապաշտ մըն է, բառին կատարեալ իմաստովը: Իրաւ է որ շատ անգամ կը ձեւագեղծէ իրականութիւնը աւելի ազդեցութիւն գործելու համար, և կը չափազանցէ. բայց իր չափազանցութիւնները գիտակցութեամբ ու դիտումով եղած են միշտ»<sup>2</sup>: Իրականության հանդեպ ունեցած անչափ իրատես և հեռատես հայացքն էր գուցե պատճառը, որ ստիպում էր նրան շատ դեպքերում դեմ գնալ իր սկզբունքներին՝ առկա և սպասվող իրականությանը գեթ փոքր-ինչ միջամտելու և այն ի բարին ու ի ձշմարիտն ուղղորդելու գրողական մղումով: Թերևս սրանով կարելի է բացատրել հայատառ թուրքերեն և թուրքախառն հայերեն երկերի առկայությունը երգիծաբանի գործերի շարքում:

## 1. Հայատառ թուրքերեն գրելու շարժառիթները

Ինչո՞ւ Պարոնյանը գրեց հայատառ թուրքերեն, ի՞նչը դրդեց նրան ստեղծագործելու թուրքերեն: Այս հարցը վաղուց բարձրացրել է գրականագետ Գևորգ Մադոյանը. «Այս բոլորից հետո ինչո՞վ բացատրել այն երևույթը, որ գրաբարի դեմ, աշխարհաբարի զարգացման և հաղթանակի համար այնքան կրքոտ պայքարի էլնող Պարոնյանը, որն իր ամբողջ ստեղծագործության մեջ եթե մի երկու էջ գրաբար գրել է՝ միայն գրաբարամուլներին ծաղրելու և գրաբարի կողքին կենդանի ժողովրդական լեզվի՝ աշխարհաբարի անառարկելի առավելությունները ցուցադրելու համար, հանկարծ, ձիշտ է, կարճ ժամանակով (ընդամենը 3–4 տարի), գրում է թուրքերենով կամ թուրքախառն հայերենով, որից հետագայում հրաժարվում է»<sup>3</sup>: Պարոնյանը նույնիսկ «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերի նյութերը չի գրել «Պոլսի ռամիկ բարբառով» (չշփոթենք կերպարաստեղծման համար

1 Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Եր., Պետական համալսարանի հրատ., 1944, էջ 464:

2 Հրանտ Ասատուր, Պիմաստուերներ, Կ. Պոլիս, Հրատարակութիւն Եւ տպագրութիւն Կ. Քէշիշեան որդի, 1921, էջ 176:

3 Մադոյան Գ., Հ. Պարոնյանի հայատառ թուրքերեն և թուրքախառն հայերենով գրված երկերի մասին, «Գրական թերթ», Եր., 1954, 9 ապրիլի:



պիսի վերելքի պատճառը դժվար չի ընկալել: Հասարակական մտքի առջև կանգնած հիմնական նպատակը ազգային ինքնագիտակցության բարձրացման խնդիրն է եղել: Այս շարժումը համակցված էր Օսմանյան կայսրությունում մտավոր ընդհանուր վերելքի հետ: Հայ ժողովրդի մայրենի լեզուն կորցրած մասը հնարավորություն չէր ունենալու մասնակից դառնալ հայերենով լույս ընծայված գրականությանը, չէր կարող կարդալ տասնյակ թերթերն ու հանդեսները, հետևել արևմտահայ նոր գրականության զարգացմանը: Նրանք զրկված էին Դևոնդ Ալիշանի, Մկրտիչ Պեշիկթաշյանի, Պետրոս Դուրյանի, Գրիգոր Օտյանի և այլոց գործերը կարդալու հնարավորությունից: Զրկված էին «Զարթոնքի շրջանի սերունդ» ընդհանուր անվանմանն արժանացած գրողների ու հրատարակատեսակների գործունեությանը հետևելուց: Անհրաժեշտ էր հենց այս խավերին մասնակից դարձնել սկսված շարժմանը: Այն հնարավոր էր իրականացնել միայն նրանց հասկանալի լեզվով՝ թուրքերենով, այն է՝ հայատառ թուրքերեն գրքերի ու պարբերականների շնորհիվ»<sup>6</sup>: Անտարբեր լինել նման վերահաս վտանգի հանդեպ, բնականաբար, Պարոնյանը չէր կարող: Նա սրտի մեծ կսկիծով է ընդունում այս իրողությունը՝ հայի օտարացումը մայրենիից: Այդ կապակցությամբ «Հայերեն չսիրող հայը» հողվածում նա գրում է. «Մեծ, շատ մեծ տրտմություն է տեսնելն, որ հայ մը հայու մը հետ տեսակցելու համար օտար լեզվով խոսի. այո՛, մեծ տրտմություն է, և սակայն ըսածնիս ալ մեծ ճշմարտություն մ'է»<sup>7</sup>: Օտարամոլությունը խոր արմատներ էր գցել հայի սրտում, և աղետալին այն էր, որ օտարամոլությամբ տառապում էր ազգի լուսավորյալ համարվող մասը. «Լուսավորյալ մաս մ'ալ կա, որ երանի թե ամենևին չըլլար, հայերեն գիրերով գրված բան մը տեսնելուն պես ջիղերուն կը դպչի կոր»<sup>8</sup>: Հայության այդ զանգվածին դարձի բերելու, ազգայինին հաղորդակից դարձնելու համար Պարոնյանը դիմում է հայատառ թուրքերենին: Եվ «Մեղու»-ի, ապա նաև «Թատրոն»-ի էջերում լույս են տեսնում նրա հայատառ թուրքերեն ստեղծագործությունները:

6 Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Եր., «Գասպրինտ», 2011, էջ 66-67:

7 Պարոնյան Հ., Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 9, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 266:

8 Նույն տեղում:

## 2. Գրականագետների անդրադարձները թեմային

Հակոբ Պարոնյանի գրական ժառանգության ուսումնասիրությանը զբաղվողներից քչերն են անդրադարձել նրա հայատառ թուրքերեն երկերին, տևական ժամանակ այդ գործերը հասանելի չեն եղել ընթերցողին: Հասկանալի է, որ պատճառը հայատառ թուրքերենի ստեղծած դժվարություններն են: Անհրաժեշտ է նաև նկատել, որ թեպետ մենք այսօր գործածում ենք ընդհանրական «թուրքերեն» բառը, սակայն Պարոնյանը գործածել է «օսմաներեն»-ը, որը թուրքերենի, պարսկերենի և արաբերենի հիման վրա ձևավորված խառնուրդ լեզու է:

Հարցին որոշակի անդրադարձ կա գրականագետ Գևորգ Մադոյանի ուսումնասիրության մեջ<sup>9</sup>: Ավելի ուշ պարոնյանագետ Գառնիկ Ստեփանյանը խորապես զբաղվել է երգիծաբանի հայատառ թուրքերեն գործերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև թարգմանությամբ. նրա թարգմանությամբ նախ «Գարուն» ամսագրի 1972 թ. 11 (71)-րդ համարում, ապա Բեյրութի «Շիրակ» հրատարակչատան կողմից 1978 թ. առանձին գրքով լույս է տեսնում հայատառ թուրքերեն գրված «Տաղ եփրիմէսէ ապտալ եփրիսիւն» («Լեռը մարգարէին քով չերթայ նէ՛ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա») երգիծավեպը, որը հատվածաբար հրատարակվել էր «Թատրոն» երգիծաթերթի 1874 թ. 88-150-րդ համարներում որոշակի դադարներով: Լինելով Պարոնյանի ստեղծագործության խորքային ուսումնասիրողներից մեկը՝ Գառնիկ Ստեփանյանն այդպես էլ չընդունեց դերանուն-ծածկանուններով գրված հայատառ թուրքերեն գործերի՝ երգիծաբանի գրչին պատկանելու փաստը, այլ դրանք վերագրեց երգիծաթերթի աշխատակիցներից մեկին: Երգիծաբանի այս երկերը գրականագիտական մանրակրկիտ քննության է ենթարկել գրականագետ Ալբերտ Մակարյանը՝ անվիճարկելի փաստերով ապացուցելով, որ դրանք Պարոնյանին են՝ այդպիսով «անարդարացիորեն Հակոբ Պարոնյանին զլացվածը» վերադարձնելով նրան<sup>10</sup>:

Երգիծաբանի հայատառ թուրքերեն գրական ժառանգության մի զգալի մաս լույս է տեսել հենց դերանուն-ծածկանուններով: Բավա-

9 Տե՛ս Մադոյան Գ., Անդրադարձ, Եր., «Հայաստան», 2012, էջ 31-32, 49-50:

10 Տե՛ս Մակարյան Ա., Կրկին Պարոնյանի հետ, Եր., «Անտարես», 2018, էջ 227-240:

կան է նշել միայն «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» նորահայտ երգիծավեպը, որը հիմնականում հրատարակվել է «Ես» ծածկանունով (որոշ համարներ անստորագիր են, իսկ վերջին մասը լույս է տեսել «Դուր» ծածկանունով): Այս առումով ուշագրավ է Մարգարիտ Ըրղաթբաշյանի կատարած ծավալուն աշխատանքը: Նա ամբողջացրել և տողատակերում թարգմանություններով հրատարակել է այդ երգիծավեպը՝ լրացնելով Պարոնյանի ժառանգության բացերից մեկը: Պատրաստում էինք Հակոբ Պարոնյանի նորահայտ երկերի հրատարակությունը (արդեն իսկ պատրաստ էր «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» երգիծավեպի շարվածքը), երբ խիստ պատահաբար հայտնաբերեցինք Մ. Ըրղաթբաշյանի գիրքը՝ «Նորահայտ էջեր Հակոբ Պարոնյանի գրական ժառանգությունից («Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերի հայատառ տաճկերեն երկերը)»: Գտել ենք խիստ պատահաբար, քանի որ հայաստանյան և ոչ մի գրադարանում գիրքը լույս տեսնելուց հետո տեղ չի չգտել (առկա է միայն մեկ օրինակ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գրադարանում), ինչը և նման ուշ բացահայտման պատճառ է դարձել: Մ. Ըրղաթբաշյանը, նշված երգիծավեպերից բացի, գրքում անդրադարձել է նաև հայատառ թուրքերեն մի շարք երկերի, որոնք անստորագիր են լույս տեսել: Փաստորեն, դերանուն-ծածկանուններով լույս տեսած հայատառ թուրքերեն փոքրածավալ բազմաթիվ երկեր այդպես էլ մնում են չուսումնասիրված:

### 3. Հակոբ Պարոնյանի հայատառ թուրքերեն երկերի լեզվական և թեմատիկ առանձնահատկությունները

Երգիծաբանի հայատառ թուրքերեն երկերը կարող ենք բաժանել երկու խմբի՝ հիմք ընդունելով գրականագետների կողմից դրանց հեղինակային պատկանելության վիճարկման հանգամանքը.

1. հայատառ թուրքերեն երկեր, որոնց հեղինակն անկասկած Պարոնյանն է, թեպետ դրանց մի զգալի մաս լույս է տեսել Պարոնյանի հայտնի ծածկանուններով և անստորագիր (այս գործերն ընդգրկված են նրա երկերի լիակատար ժողովածուներում կամ հրատարակվել են առանձին գրքով),

2. հայատառ թուրքերեն երկեր, որոնք լույս են տեսել **Ես, Դուն, Անիկայ, Մենք, Ոմն, Ո՛վ է Նէ, Վառարան, Կարկուտ** ծածկանուններով և անստորագիր, և որոնց՝ Պարոնյանի գրչին պատկանելու փաստը կասկածի տակ է դրվել որոշ պարոնյանագետների կողմից, թեպետ կան անհերքելի ապացույցներ, որ դրանց հեղինակը նա է:

Երգիծաբանի գեղարվեստական ժառանգության մեջ թեպետ շատ են հայատառ թուրքերեն և թուրքախառն հայերեն երկերը, սակայն անդրադառնալու ենք միայն «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերում հրատարակվածներին: Դրանց շարքում կան ինչպես երգիծավեպեր, որոնց մասին խոսվեց վերը, այնպես էլ երգիծական մանրապատումներ, քաղաքական քրոնիկներ և հրապարակախոսական ակնարկներ:

«Մեղու» երգիծաթերթում լույս տեսած հայատառ թուրքերեն գործերից են՝ «Պալօ» (1873, № 196, անստորագիր), «Երկու օրիորդ» (1874, № 200, 201, Ա. ստորագրությամբ), «Ալաֆրանկա» (երգիծական պատմվածքների շարք, 1874, № 202, 203, 204, 205, 206, անստորագիր), «Բօլ պէլսար» (1874, № 214, անստորագիր): Այս գործերում բավականին շատ են հայատառ թուրքերեն հատվածները, և առանց թարգմանության բովանդակությունն ընկալել հնարավոր չէ:

Հարկ է ընդգծել, սակայն, որ «Մեղու» երգիծաթերթում դերանուն-ծածկանուններով լույս տեսած երկերում նկատելի է գլխավորապես թուրքախառն հայերենի գործածությունը, բացակայում են հայատառ թուրքերեն ծավալուն հատվածները: Այսպես՝ հերոսներն իրենց խոսքում գործածում են այսպիսի բառեր՝ **կիւճէնմիշ ըլլալ՝** վշտանալ, նեղանալ («Կարդացող տէրպապան», «Մեռելկոխի մը», «Թացիկ Մարգար»), **գավալը՝** խեղձ, թշվառ, արգահատելի («Շաբխա կուզեմ չէ՛ նէ հիմայ կը պօռամ», «Հարսնախօսութիւն», «Համբարձում աղա Թայկարեան», «Ծովաբաղնեբուժութիւն»), **սօլմիշ ըլլալ՝** գունատվել, թոշնել («Ալէմ տաղիի կոխի մը»), **տիւյիւմ՝** հանգույց («Բանկալթիի թօփալ Տէր Պապան»), **լախըռտը՝** խոսք («Շաբխա կուզեմ չէ՛ նէ հիմայ կը պօռամ», «Թացիկ Մարգար», «Թաղի մը խորհրդարանը»), **ուղուրսուզ՝** ոչ բարեբեր ոտք ունեցող («Համբարձում աղա Թայկարեան»), **կելինձիկ(ք)ձի՝** կելինձիկ հիվանդությունը բուժող գրբաց, **սէօզիւմ եապանա՝** խոսքս ամոթ, իբր թե, **պէլլէմիշ ընել՝**

մտապահել («Ծովաբաղնեբուժութիւն»), **թօհաֆ**՝ տարօրինակ, գվարձալի, **պէքլէյել**՝ սպասել («Թաղի մը խորհրդարանը») և այլն<sup>11</sup>:

«Մեղու» երգիծաթերթում կան նաև դերանուն-ծածկանունով հրատարակված սակավ երկեր, որոնցում համեմատաբար ավելի շատ են հայատառ թուրքերեն և թուրքախառն հայերեն հատվածները: Այսպես՝ «Աւագ հինգշաբթի օրուան բանայիրը» երգիծապատումի երկխոսություններում գերակշռում են նմանատիպ հատվածները. «Տէ՛ր պապա, ճանըմ սուլու չէյլէր կէթիրմէսէլէր տէ, օրթալըղը, կիւզէլիմ իւթլէրի պաչլարընը պէրպատ էթմէսէլէր օլմա՞գ մը»<sup>12</sup>:

Այլ է պատկերը «Թատրոն» երգիծաթերթում. այստեղ կարդում ենք հայատառ թուրքերեն և թուրքախառն հայերեն զգալի հատվածներ, մասնավորապես՝ «Լեռը մարգարէին քով չերթայ նէ՛ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա» և «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» երգիծավեպերում (վերջինը լույս է տեսել դերանուն-ծածկանունով): Այսպես, օրինակ.

– Գաբիկ աղա, ձէնապին տահա պէնիմ էֆթեարըմը աննամամըշըն: Պէն օ գատար գալապալըգ եէրէ ֆամիլեա կէօթիւրէմէմ: Աթալարըմըգա պինլէքձէ ռահմէթ, քիշի կէորտիյիւնտէն ազար տէմիշլէր: Ֆէնա՞ մը տէմիշլէր<sup>13</sup>: (Թարգմ.՝ – Գաբիկ աղա, Ձերդ պայծառափայլությունը դեռ միտքս չէ հասկըցեր: Ես այդպիսի բազմության մեջ ընտանիք տանիլ չեմ կ'ըրնար: Հազար ողորմի մեր նախնիներուն, որ «տղամարդ տեսնալուն պես կնիկը կը կատողի» ըսեր են: Գե՞շ ըսեր են:)<sup>14</sup>:

«Թատրոն» երգիծաթերթում լույս տեսած հայատառ թուրքերեն քաղաքական քրոնիկներից են՝ «Բոլիթիքա ըույասը» («Քաղաքական երագ»), «Բոլիթիքա թյուրիսի» («Քաղաքական խառնուրդ»), «Բոլիթիքա սալաթասը» («Քաղաքական աղցան») և այլն:

Հակոբ Պարոնյանի հայատառ թուրքերեն երկերի շարքում իր ուրույն տեղն ունի «Ֆալ պագալըմ» («Բախտ գուշակենք») երգիծաշարը (լույս է տեսել «Թատրոն» երգիծաթերթի 1874 թ. և գլխավորա-

11 Թարգմանությունները տես «Ենիներան ազգագրական ժողովածու հրատարակութեամբ Լազարեան ձեմարանի Արեւելեան լեզուաց», հատ. Գ. Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր Նախիջեւանի բարբառներուն, գրեց՝ **Հր. Աճառեան**, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:

12 «Մեղու», Կ. Պօլսի, 1873, ապրիլի 12, N 129 (հրատարակվել է «Ղուն» ծածկանունով):

13 «Թատրոն», Կ. Պօլսի, 1874, սեպտեմբերի 30, N 52 (հրատարակվել է «Ես» ծածկանունով):

14 Թարգմանությունը՝ ըստ Մարգարիտ Ըրդաթբաշյանի նշված գրքի՝ որոշակի խմբագրմամբ:



պես 1875 թ. համարներում), որում գնչու կնոջ պատումի միջոցով հեղինակը ներկայացնում է հասարակական-քաղաքական մի շարք գործիչների՝ «ազգային ջոջերի» գործունեությունը: «Ֆալ պագալը»-ը դարձավ «Ազգային ջոջեր» դիմանկարների շարքի նախապատրաստությունը: Այստեղ կարող ենք չհամաձայնել Մ. Պասմաձյանի այն դիտարկման հետ, թե «Ընդհանրապես արուեստի քիչ մշակող է Պարոնեան: Ջոջերը՝ ուր աւելի իրաւունք ունինք արուեստը քիչ մ'աւելի խնամած տեսնելու, դեռ յուսախար կընեն մեզ»<sup>15</sup>: Մ. Ըրդաթբաշյանը գրում է. «Հայատառ տաճկերեն դիմանկարներում երգիծաբանի օգտագործած գեղարվեստական միջոցները հիանալի են իրենց կատարելությամբ, բազմազանությամբ: Այստեղ հեղինակը ցուցաբերում է երգիծական փայլուն վարպետություն, կոմիզմի հազվագյուտ ուժ»<sup>16</sup>:

Առանց թուրքերենի իմացության կամ բառարանի գործածության անհնար է հասկանալ այս երգիծաշարի և վերը նշված երկու երգիծավեպերի բովանդակությունը, ինչը բնականաբար դժվարացնում է դրանց վերլուծությունը և գեղարվեստական առանձնահատկությունների գնահատումը: «Լեռը մարգարէին քով չերթայ նե՛ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա» երգիծավեպն այս տեսանկյունից ընկալելի և վերլուծելի է՝ շնորհիվ հաջող թարգմանության<sup>17</sup>: Հատկանշական է երգիծավեպի թարգմանիչ Գառնիկ Ստեփանյանի՝ «Հակոբ Պարոնյանի նորահայտ երգիծավեպը» հոդվածում արած դիտարկումը երկի լեզվական ընդգրկունության, կերպարների բառապաշարի վերաբերյալ. ««Լեռը մարգարէին քովը չերթա նե՛ մարգարեն լեռան քովը կ'երթա» երգիծավեպում հանդիպում ենք մի քանի տասնյակ հայերեն բառերի, ինչպես՝ բարի լույս, աստծո բարին, լուսավորյալ դար, խավարյալ, խղճմտանք, հառաջադիմություն, բարոյականություն, անմեղ և այլն: Հեղինակը լեզվական կոլորիտը խստորեն պահպանել է բոլոր հերոսների մոտ: Փաստաբանը խոսում է խրթին թուրքերենով, առատորեն օգտագործելով արաբերեն բառեր ու արտահայտություններ, որոնցից ոչինչ չի հասկանում Նիկողիմոսը:

15 **Պասմաձեան Մ.**, Ուսումնասիրութիւն Պարոնեանի երկասիրութեանց, «Բազմավէպ» հանդիսարան, ամսագիր, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1900, Յունիս, N 6, էջ 275:

16 **Ըրդաթբաշյան Մ.**, Նորահայտ էջեր Հակոբ Պարոնյանի գրական ժառանգությունից («Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերի հայատառ տաճկերեն երկերը), Երևան-Լոս Անջելես, 2017, էջ 48:

17 Գրականագիտական առաջին համապարփակ քննությունը տես **Մակարյան Ա.**, Եվրոպականի ու ասիականի փոխհարաբերության գեղարվեստական ընկալումը Հակոբ Պարոնյանի «Լեռը մարգարէին քով չերթայ նե՛ մարգարէն լեռան քով կ'երթայ» երգիծապատումի մեջ, «Վեմ» համահայկական հանդես, Եր., 2018, N 1, էջ 59-74:

Ժորժն ու Մարին գործածում են ֆրանսերեն բառեր և ամբողջ նախադասություններ, իսկ ձիապանը, բեռնակիրները, Նիկողիմոսի բարեկամ Համբարձումը խոսում են ժողովրդական պարզ լեզվով»<sup>18</sup>: Պարոնյանի կերպարաստեղծումն այս երգիծավեպում կատարելապես հաջողվել է. յուրաքանչյուրին գրողը խոսեցրել է իր բնույթին, իր բառապաշարին համապատասխան:

«Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» երգիծավեպի թարգմանությունը հատվածաբար ներկայացված է տողատակերում, ինչը որոշակիորեն բարդացնում է ընթերցանության ընթացքը և բովանդակության ընկալումը: Հայատառ թուրքերենի կիրառությունը, անշուշտ, փոքր-ինչ խլացնում է Պարոնյանի երգիծանքի սուր և ազդու ձայնը: Մ. Ըրդաթբաշյանը նշում է. «Հայատառ տաճկերեն երկերում երգիծաբանները երբեմն ստիպված են եղել խոսել եզովպոյան լեզվով, որոնց մեջ, Պարոնյանի արտահայտությամբ՝ կ'մարի երգիծանքը»<sup>19</sup>:

Ինչպես «Մեղու» երգիծաթերթի վերը թվարկված գործերում, այնպես էլ «Թատրոն»-ի հայատառ թուրքերեն երկերում՝ «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» և «Լեռը մարգարէին քով չերթայ նէ՝ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա» երգիծավեպերում, Պարոնյանի նպատակը մեկն է եղել՝ արմատախիլ անել օտարամոլությունը հայության միջից, գերծ պահել նրան ուծացումից: Ալաֆրանկան և ալաթուրքան դեպի կործանում էին տանում հայ մարդուն, որն անգիտակցաբար, տրվելով նոր ժամանակների գայթակղություններին, նախապատվությունը տալիս էր ֆրանսերենին, թուրքերենին՝ մոռանալով մայրենին, ազգայինը, մոռանալով իր տեսակը: Գրողի համար ցավն անսահման էր. իր հայրենակիցները միմյանց դիմում էին **միւսիւ, մատմազէլ, քավալիէր, բարոօն, մէրսի պիէն, պօնժուր** և նմանատիպ այլ օտար բառերով, հրաժարվում ազգային սովորույթներից՝ յուրացնելով օտարինը, կապկելով ֆրանսիական կենցաղը: Պարոնյանի համար սա մեծ ողբերգություն էր, որի մասին նա անվերջ բարձրաձայնել է. «Ձեմ կրցած ըմբռնել թէ օտարին թերութիւնն իբրեւ առաւելութիւն եւ տգեղութիւնն իբրեւ գեղեցկութիւն տեսնելու աչքի տկարութիւնն ի'նչպէս մուտ գտած է մեր

18 **Ստեփանյան Գ.**, Հողվածներ և հուշեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 125-126:

19 **Ըրդաթբաշյան Մ.**, նշվ. աշխ., էջ 29:

մեջ»<sup>20</sup>: Զավեշտը գագաթնակետին է հասնում «Լեռը մարգարէին քով չերթայ նէ՝ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա» երգիծավեպի այն դրվագում, երբ գլխավոր կերպարներից մեկը՝ Նիկողիմոս աղան, չհասկանալով իր ապագա փեսա Ժորժի գործածած ալաֆրանկա բառերը, ասում է նրան. «- Թուրքերէն խօսեցէք, մուշու, որ հասկնամ»<sup>21</sup>: Սա արդեն ողբերգություն է, հեռացում, նահանջ հայկականից, ազգայինից: Նիկողիմոս աղան և Խաչիկ աղան բախվում են նոր միջավայրին, նրա պարտադրած կանոններին և այդ ճանապարհին կործանվում: Այս տիպերի կործանմամբ երգիծաբանը դաս է տալիս բոլոր նրանց, ովքեր պատրաստվում են դեմ գնալու ազգային արժեքներին ու ակունքներին:

Այս կերպարներն այսօր էլ ապրում են մեր իրականության մեջ, հետևաբար Պարոնյանը դեռ ասելիք ունի, հետևաբար ընթերցողը, որին առավել ծանոթ են Աբիսողոմ աղայի և Պաղտասար աղբարի կերպարները, պետք է դեռ ընթերցի «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» և «Լեռը մարգարէին քով չերթայ նէ՝ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա» երգիծավեպերը՝ անհրաժեշտ հետևություններ անելով և դասեր քաղելով գալիք օրերի համար, թույլ չտալով Ժորժերի, Մարիների, Գաբիկների և նրանց նմանների շարունակականությունը:

## Եզրակացություններ

Ընդհանրացնելով ասվածը՝ հանգում ենք մի քանի կարևոր եզրակացությունների.

1. Պարոնյանի համար հայատառ թուրքերեն ստեղծագործելը նպատակ չի եղել, այլ որոշակի նպատակի իրագործման, ծրագրի կենսագործման միջոց՝ պայքար օտարացման, ազգայինի կորստյան դեմ:

2. Երգիծաբանի այս երկերի շարքում կան ինչպես փոքրածավալ ակնարկներ, այնպես էլ երգիծաշարեր և երգիծավեպեր: Հետևաբար ժանրային առումով հայատառ թուրքերենի գործածությունը որևէ կերպ չի սահմանափակել հեղինակին:

20 Պարոնեան Յ., Խնդալով, խմբ.: Մարո Ամագոն, Պոսթըն, «Հայրենիք» տպարան, 1947, էջ 188-189:

21 Պարոնեան Յ., Լեռը մարգարէին քով չերթայ նէ՝ մարգարէն լեռան քով կերթայ. ալաֆրանկա, թարգմ.: Գ. Ստեփանյան, Պէյրուք, «Շիրակ» հրատարակչատուն, 1978, էջ 30:

3. Հայատառ թուրքերեն երկերի զգալի մասը դարձավ Պարոնյանի ստեղծագործական լաբորատորիայի յուրօրինակ փորձաշրջանը՝ նախապատրաստելով և հասունացնելով նրա այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Մեծապատիվ մուրացկանները», «Քաղաքավարության վնասները», «Ազգային ջոջերը»: Սա նաև ստեղծագործական խմորումների շրջան էր գրողի համար, որի հետևանքով նա հասավ երգիծական խոսքի գեղագիտական և բովանդակային կատարելության, ինչը քչերին է հաջողվում:

4. Հակոբ Պարոնյանի հայատառ թուրքերեն երկերը նրա մահվանից 131 տարի անց դեռ կարոտ են խորքային գիտական վերլուծության և հանրայնացման:

Պարոնյանը շարունակ բացահայտումների է մղում: Թերևս նա ինքը տեսակով այդպիսին էր՝ հետազոտող, քննող, վերլուծող: Հայատառ թուրքերեն գրելը բնավ չլռեցրեց նրա հոգում հայերենի ելևէջումը: Տեղին են Գառնիկ Ստեփանյանի խոսքերը, թե «Նա մտածում է հայերեն, նույնիսկ երբ գրում է թուրքերեն»<sup>22</sup>: Նրա յուրաքանչյուր գիր, լինի հայատառ թուրքերեն, թուրքախառն հայերեն թե՛ Պոլսի բարբառով, հիմքում խորապես ազգային է, ազգային է ասելիքը, ազգային են դասերը, որոնք նա տալիս է:

Հարկ ենք համարում մեջբերել Հ. Սիրունու կարևոր դիտարկումը. «Պարոնեանի դերը չի կայանար այն բանին մէջ, որ զմայլելի հերոսներու վերածեց իր տիպարները եւ զանոնք դասական դարձուց, ինչպէս կը կարծեն եւ կը յեղյեղեն Պարոնեանի գրական ժառանգութեամբ զբաղողներէն գրեթէ բոլորը, այլ այն մեծ ծառայութեան մէջ, որ ան մատուցեց իր օրերու Պոլիսին: Ծիծաղելի դարձնելով այս կամ այն տիպարը, որուն կը հանդիպէր ան կեանքի մէջ եւ խտացնելով գոյները, Պարոնեան չթողուց, որ այդ տիպարները ընդհանրանան»<sup>23</sup>:

**Այսպիսով՝ Պարոնյանը, զոհելով երգիծական արվեստը բովանդակությանը, ասելիքին, մի քանի տարի ստեղծագործեց հայատառ թուրքերեն, ստեղծեց մերժելի, ապազգային տիպեր, ցույց տվեց նրանց կործանումը՝ այդ կերպ ձգտելով կանխելու նման տիպերի ընդհանրացումը և հասարակության համար բնորոշ տեսակ դառնալը:**

22 Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 110:

23 Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, Երրորդ հատոր, Անթիլիաս-Լիբանան, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1987, էջ 358:

**Մարո Վ. Ղուկասյան** – հեղինակ է 3 գիտական հոդվածի: Զբաղվում է հայ գրականության պատմության և տեսության, տվյալ պահին՝ «Մեղու» և «Թաստրոն» երգիծաթերթերում դերանուն-ծածկանուններով Հակոբ Պարոնյանի հրատարակած երկերի ուսումնասիրությամբ: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է գրական ժանրերը և սեռերը, երգիծանքի տեսությունը և թարգմանության տեսությունը:

Էլ. հասցե՝ maroghukasyan.mg.mg@gmail.com

Summary

## HAKOB PARONYAN'S WORKS WRITTEN IN TURKISH LANGUAGE BY ARMENIAN LETTERS

Maro V. Ghukasyan

**Key words** – Hakob Paronyan; Turkish language by Armenian letters, Armenian with Turkish words, satirical newspaper “Meghu”, satirical newspaper “Tatron”, pronoun-pseudonyms, “If the mountain won’t go to the prophet, then the prophet must go to the mountain: alafranga”, “Khachik of the old world, Gabik of the new world”, unsigned, satire; comic narration.

The following paper discusses Armenian genius humorist Hakob Paronyan’s works written in the Turkish language by the Armenian letters. In this publication the author gives answers to the question “Why Paronyan decided to write in the Turkish language by Armenian letters?” and introduces the motives for writing in the Turkish language by the Armenian letters. It is affirmed that writing in the Turkish language by the Armenian letters was not his purpose, but means to attain the purpose of saving the Armenian nation living under the control of the Ottoman Empire from the loss of their national language and nationality in general.

The author refers to literary critics’ approaches who have written articles and research on this not so much studied theme.

The paper also analyzes the lingual structure and thematic peculiarities of these works – how much the usage of the Turkish language is superior in

Paronyan's works mainly published under pronoun-pseudonyms in the satirical newspapers "Meghu" and "Tatron" of Constantinople, and what thematic line Hakob Paronyan develops in these comic narrations, sketches and short stories. In particular, the author examines the two comic narrations – "If the mountain won't go to the prophet, then the prophet must go to the mountain: alafanga" and "Khachik of the old world, Gabik of the new world".

As a result of the study, it is stated that in the above discussed works by Hakob Paronyan, the writer's main point was to increase national consciousness, to rebuild national feelings, traditions, to help the Armenians to refrain from the loss of their identity in that very difficult period of time. In the literary laboratory of the satirist, these are very interesting writings which became the preparations for his great satirical works. After 131 years of Paronyan's death, these works need more careful research and study.

Резюме

## **ПРОИЗВЕДЕНИЯ АКОПА ПАРОНЯНА НА ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ С АРМЯНСКИМИ БУКВАМИ**

Маро В. Гукасян

**Ключевые слова** – Акоп Паронян, на турецком языке с армянскими буквами, на армянском языке с турецкими словами, сатирическая газета «Мегу» («Пчела»), сатирическая газета «Татрон» («Театр»), местоимения-псевдонимы, «Если гора не идет к пророку, то пророк идет к горе: аляфранка», «Хачик старого мира, Габик нового мира», неподписанный, сатира, сатирический роман.

В статье проводится анализ произведений великого армянского сатирика Акопа Пароняна, написанных на турецком языке с использованием армянских букв. Рассматриваются произведения в сатирических газетах Константинополя «Мегу» и «Татрон». Автор статьи отвечает на вопрос «Почему Паронян написал на турецком

языке, используя армянские буквы?», рассматривает причины и мотивы этого.

Автор статьи ссылается на литературоведов, которые когда-либо обращались к этой малоисследованной теме в своих статьях или научных работах.

В данной статье рассматриваются также языковые (например, насколько доминирует турецкий язык с армянскими буквами в этих повествованиях и очерках) и тематические особенности этих произведений. С этой точки зрения, в основном, анализируются сатирические романы «Если гора не идет к пророку, то пророк идет к горе: аляфранка» и «Хачик старого мира, Габик нового мира».

По итогам исследования можно констатировать, что турецкий язык с армянскими буквами для Акопа Пароняна был лишь средством достижения одной важной цели - поднять национальное сознание, национальные чувства, от которых многие армяне, живущие под контролем властей Османской империи, отдалялись от нации, предпочитая турецкий или французский образ жизни. Писатель понимал, что это может привести к потере армянской идентичности, поэтому и решил написать на турецком языке с использованием армянских букв, который понимали армяне. Создание вышеупомянутых произведений в лаборатории сатирика стало первым этапом появления его главных творений. Спустя более 130 лет после смерти Пароняна его очерки, сатирические повествования и романы нуждаются в глубоком и кропотливом исследовании.

## REFERENCES

1. “Ēminean azgagrakan zhoghovatsu hratarakut’eamb Lazarean chemarani Arewelean lezuats’”, hat. G. T’urk’ereni azdets’ut’iwnē hayereni vray yew t’urk’erēnē p’okhāreāl baṛerē Pōlsi hay zhoghovrdakan lezuin mēj hamematut’eamb Vani, Gharabaghi yew Nor Nakhijewani barbaṛnerun, grets’ **Hr. Achaṛean**, Moskua-Vagharshapat, 1902 (**In Armenian**).
2. “Grakan t’ert’”, Yer., 1954, 9 aprili (**In Armenian**).
3. “Meghu”, K. Pōlis, 1873, aprili 12, N 129 (**In Armenian**).
4. “T’atron”, K. Pōlis, 1874, septembei 30, N 52 (**In Armenian**).
5. **Achaṛyan H.**, K’nnut’yun polsahay barbaṛi, Yer., Petakan hamalsarani hrat., 1941 (**In Armenian**).

6. **Ĕrghat'bashyan M.**, Norahayt ējer Hakob Paronyani grakan zharangut'yunits' ("Meghu" yev "T'atron" yergitsat'ert'eri hayatar tachkeren yerkerē), Yerevan-Los Anjeles, 2017 (**In Armenian**).
7. **Hrant Asatur**, Dimastuerner, K. Pōlis, Hratarakut'iwn yew tpagrut'iwn K. K'ēshishean vordi, 1921 (**In Armenian**).
8. **Madoyan G.**, Andradardz, Yer., "Hayastan", 2012 (**In Armenian**).
9. **Makaryan AL.**, Krkin Paronyani het, Yer., "Antares", 2018 (**In Armenian**).
10. **Makaryan AL.**, Yevropakani u asiakani p'okhharaberut'yan gegharvestakan ēnkalumē Hakob Paronyani "Leřē margarēin k'ov ch'ert'ay nē` margarēn leřan k'ov kert'ay" yergitsapatumi mēj, "Vēm" hamahaykakan handes, Yer., 2018, N 1, ēj 59-74 (**In Armenian**).
11. **Paronean Y.**, Khndalov, khmb.` Marō Amazon, Post'ēn, "Hayrenik'" tparan, 1947 (**In Armenian**).
12. **Paronean Y.**, Leřē margarēin k'ov ch'ert'ay nē` margarēn leřan k'ov kert'ay. Alafranka, t'argm.` G. Step'anyan, Pēyrut', "Shirak" hratarakch'atun, 1978 (**In Armenian**).
13. **Paronyan H.**, Yerkeri zhoghovatsu tasē hatorov, hat. 9, Yer., Haykakan SSH GA hrat., 1975 (**In Armenian**).
14. **Pasmachean M.**, Usumnasirut'iwn Paroneani yerkasirut'eants', "Bazmavēp" handisaran, amsagir, Venetik, Surb Ghazar, 1900, Yunis, N 6 (**In Armenian**).
15. **Siruni Y.**, Polis yew ir derē, yerrord hator, Ant'īlias-Libanan, Tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikiyo, 1987 (**In Armenian**).
16. **Step'anyan G.**, Hodvatsner yev husher, Yer., "Sovetakan grogh" hrat., 1985 (**In Armenian**).
17. **Step'anyan H.**, Hayeri nerdrumn Ōsmanyān kaysrut'yunum, Yer., "Gasprint", 2011 (**In Armenian**).
18. **Terteryan A.**, Hay Klasikner, Yer., Petakan hamalsarani hrat., 1944 (**In Armenian**).